ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«ՏՐԱՆՍՀԱՅԱՍՏԱՆ»

N 8

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՄԱՐՏ-ԱՊՐԻԼ-ՄԱՅԻՍ

2019

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՎՐԵԺ ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԲՈՒԽԱՐԵՍՏՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ «ՍՏԵՂԾԱՐԱՐ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ» ԴԱՍԸՆԹԱՑԻՆ

Սույն թվականի Մարտի 13 — 16ը «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության աշխատակից Վրեժ Վարժապետյանը մասնակցեց Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստում տեղի ունեցած «ստեղծարար շահերի պաշտպանություն» դասընթացին, որը կազմակերպվել էր Centrul de Resurse pentru participare publică – CeRe կազմակերպության կողմից: Նպատակն էր՝ միասին ուսումնասիրել արվեստը, դրա կիրառումը շահերի պաշտպանության և ակտիվիզմի մեջ, տիրապետել տարբեր ստեղծարար գործիքներին և դրանք ճիշտ կիրառել շահերի պաշտպանության ծրագրերում: Դասընթացին մասնակցում էին ներկայացուցիչներ Վրաստանից, Ուկրաինայից, Մոլդովայից, Բուլղարիայից, Ռումինիայից և Հայաստանից:

«Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունն իր շնորհակալությունն է հայտնում Centrul de Resurse pentru participare publică – CeRe կազմակերպությանը համագործակցության համար, որը կրելու է մշտական և շարունակական բնույթ:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

«Անգլերենի դասընթաց թեյի շուրջ»

Սույն թվականի մարտից-մայիս «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության համայնքային ապահով տարածքում տեղի ունեցան «Անգլերենի դասընթաց թեյի շուրջ» սոցիալական միջոցառումը:
Անգլերեն լեզվի մասնագետներ Հակոբն ու Լյուսին այսուհետ ամեն երեքշաբթի օրերին, ժամը 16.00ին Տրանս և ԼԳԲԻՔ համայնքի համար հատուկ կանցնացնեն անգելերն լեզվի դասընթացներ:

«Կինոքննարկման ակումբ»

Սույն թվականի մարտից մայիս ամիսների ընթացքում «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության համայնքային ապահով տարածքում տեղի ունեցան «Կինոքննարկման ակումբ» սոցիալական միջոցառումը, որոնք վարեց կազմակերպության աշխատակից Վրեժ Վարժապետյանը:
Մասնակիցները դիտեցին առաջին ռուսական ԼԳԲՏԻՔ կարճամետրաժ սարսափ ֆիլմը՝ “pyotr497” և “Boys Don’t Cry” սոցիալական կարճամետրաժ ֆիլմը, որը պատմում է Մոսկվայում բնակվող քուիր դիմահարդարների նկատմամբ խտրականության և բռնության մասին:
Այսուհետ ամեն հինգշաբթի, ժամը 16:00ին Վրեժ Վարժապետյանը հատուկ ՏՐԱՆՍ և ԼԳԲԻՔ համայնքի համար կանցկացնի «Կինոքննարկման ակումբ» միջոցառումը, որի նպատակն է լինելու միասին դիտել և քննարկել տարբեր կարճամետրաժ ֆիլմեր և սովորել կինոարվեստի հմտությունները:

Թարմացում Վրեժ Վարժապետյանին ծեծի ենթարկելու վերաբերյալ

2019 թ. Փետրվարի 11-ի գիշերը, «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի աշխատակից Վրեժ Վարժապետյանը ֆիզիկական հարձակման է ենթարկվել անծանոթ երիտասարդ տղամարդու կողմից Երևանի Թումանյան եվ Կողբացի փողոցների հատման կետում: Դեպքից անմիջապես հետո, ստանալով լուրջ ֆիզիկական եվ հոգեբանական վնասվածքներ, Վրեժը դիմել է բժշկի և իրավական մարմիններին: Հաղորդում տալով ՀՀ Ոստիկանության կենտրոնական բաժին՝ տեղի ունեցած դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ըստ ՀՀ քր օր.-ի 118-րդ հոդվածով: Սակայն այս դեպքի հանրայնացումից հետո Վրեժը շարունակաբար ստանում է սպառնալիքներ և ատելության կոչեր, որի առթիվ ոստիկանությունում ներկայացվել է հաղորդում: Ոստիկանությունը մերժել է քրեական գործ հարուցելը՝ հայցի իրական սպառնալիքների բացակայության հիմքով, այնինչ դրանք առկա են Վրեժի և այլ օգտատերերի ֆեյսբուքյան էջերում: Հարկ ենք համարում նաև նշել, որ Ոստիկանությունն իր մերժման որոշման մեջ նշել է, որ Վրեժ Վարժապետյանը «նույնասեռամոլ» է, ինչի հետ կապված «ֆեյսբուքյան օգտատերերը» արտահայտել են իրենց զայրույթը, այդ իսկ պատճառով նյութերում բացակայում են ՀՀ քր. օր.-ի 137 հոդվածի հանցակազմը:
Սպառնալիքների վերաբերյալ քրեական գործի մերժումը բողոքարկվել է Գլխավոր դատախազություն, իսկ ծեծի հետ կապված քրեական գործը գտնվում է վարույթում:



ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԴԻՍԿՈՒՐՍԸ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԼԻԼԻԹ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԻՑ ՀԵՏՈ



«Իրավունքի Կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն հավաքագրեց տրանսգենդեր անձանց վերաբերյալ հանրային դիսկուրսը ՀՀ ԱԺ-ում Լիլիթ Մարտիրոսյանի ելույթից հետո: Ամբողջական նյութը կարող եք ընթերցել հետևյալ հղմամբ՝ https://bit.ly/2QflF0A.

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԼԻԼԻԹ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԱՀՎԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ԱՌԹԻՎ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՀԱՐՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ

2019 թ.-ի ապրիլի 5-ին ՀՀ Ազգային Ժողովում տեղի ունեցած հանրային լսումների ժամանակ տրանսգենդեր անձանց իրավունքներին ուղղված ելույթից հետո ատելության խոսքի ու սպառնալիքների նոր տարափ սկսվեց «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան ՀԿ նախագահ տրանսգենդեր կին Լիլիթ Մարտիրոսյանի, նրա կոլեգաների և ԼԳԲՏԻՔ անձանց հանդեպ: Լիլիթ Մարտիրոսյանը 06.04.2019թ.-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի Կենտրոնի բաժին հաղորդում է ներկայացրել առ այն, որ իր՝ ՀՀ Ազգային Ժողովում ելույթից հետո «ՍԱՍ» սուպերմարկետների ցանցի առաքիչը համացանցում իր ֆեյսբուքյան էջի միջոցով անօրինական կերպով հրապարակել է իր անձնական տվյալները՝ բնակության հասցեն: Միաժամանակ նույն օրը, Լիլիթ Մարտիրոսյանը հաղորդում է ներկայացրեց, որ «Արծիվ 30 Արարատ մահապարտ» խումբ անվանումով անձնակազմի անդամի կողմից ստացել է սպանության և բռնության սպառնալիքներ, որը հրապարակվել է տեսանյութի կենդանի հեռարձակման միջոցով: Հաշվի չառնելով իրական սպառնալիքների բոլոր ակներև ապացույցները՝ ՀՀ ոստիկանության Կենտրոնի բաժնի հետաքննիչ Ա. Ոսկանյանի կողմից 16.04.2019թ.-ին կայացվել է որոշում տրամադրված ցյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին: Սակայն վերոնշյալ որոշումը կայացվել է քրեադատավարական օրենքի խախտումներով և Լիլիթ Մարտիրոսյանի իրավունքների խախտումները իրականում ենթակա են վերացման:

Ամբողջական հայտարարությունը կարող եք ընթերցել հետևյալ հղմամբ՝ https://bit.ly/2JBrco2



ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԿՈՉ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Այսօր ամբողջ աշխարհում նշվում է հոմոֆոբիայի, բիֆոբիայի եւ տրանսֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրը: Աշխարհի մի շարք երկրներում կազմակերպվում են տարատեսակ հանրային միջոցառումներ՝ տոնելու համար գենդերային եւ սեռական բազմազանությունը: Հաշվի առնելով հայ հասարակության պահպանողական լինելը եւ քաղաքական կամքի բացակայությունը ապահովելու համար սեռական եւ գենդերային փոքրամասնությունների հավասարությունը՝ ցավոք, Հայաստանում տրանսգենդեր անձիք շարունակում են մնալ ամենօրյա խարանի, խտրականության, բռնությունների, նսեմացումների ու նվաստացումների թիրախ:

Չնվազող ատելության մակարդակը առավելապես սրվում է, երբ տարատեսակ ռադիկալ խմբավորումներ, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, կրոնական առաջնորդներ, քաղաքական գործիչներ, լրագրողներ եւ հասարակության այլ շերտերի ներկայացուցիչներ սպառնալիքներ են հնչեցնում տրանսգենդեր անձանց հասցեին եւ շարունակում մնալ չպատժված պատկան մարմինների կողմից:

Միեւնույն ժամանակ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն հայտնում է, որ Ազգային Ժողովում Լիլիթ Մարտիրոսյանի ելույթից հետո Հայաստանում տրանսգենդեր իրավապաշտպանները շարունակում են ենթարկվել հալածանքների, քանի որ առայսօր մահվան սպառնալիքների տեղատարափը չի դադարել, բոլոր սպառնացողները գտնվում են ազատության մեջ, իսկ նրանց նկատմամբ քրեական գործերի հարուցումը մերժվել է Ոստիկանության կողմից:

Հաշվի առնելով ՀՀ-ում հակախտրականության, ատելության խոսքի, գենդերային հիմքով ատելության հողի վրա բռնությունների վերաբերյալ օրենսդրության բացակայությունը, տրանսգենդեր անձանց նկատմամբ բռնությունների թիվը, տրանսգենդեր իրավապաշտպանների չպաշտպանված լինելը, ստեղծված վախի ու անպատժելիության մթնոլորտը՝ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն կոչ է անում.

Քաղաքական գործիչներին, Կառավարությանը եւ ԱԺ պատգամավորներին՝

օր առաջ սկսել տրանսգենդեր անձանց իրավունքների պաշտպանությանն ուղղված օրենսդրության եւ քաղաքականությունների մշակումը, ներառյալ՝

գենդերային ինքնության եւ ինքնաարտահայտման հիմքով խտրականությունն արգելող օրենդրության մշակում,

գենդերային ինքնության եւ ինքնաարտահայտման հիմքով ատելության հողի վրա կատարվող հանցագործությունների քրեականացում,

ատելության խոսքի սահմանափակումն արգելող օրենսդրության ընդունում,

սեռափոխության եւ հորմոնաթերապերիայի ոլորտում բժշկական ուղեցույցերի մշակում եւ ընդունում,

սեռի իրավական փոփոխության հետ կապված օրենսդրության բարելավում՝առանց պարտադիր բժշկական միջամտությունների՝ հենվելով անձի գենդերային ինքնության վրա,

տրանսգենդեր իրավապաշատպանների ապահավությունն ու անվտանգությունն երաշխավորող օրենսդրության ընդունում:

ՀՀ Ոստիկանությանը՝

իրականացնել բռնությունների թիրախ հանդիսացած տրանսգենդեր անձանց իրավունքների պաշտապանության ուղղված քաղաքականություններ, ներառյալ՝

արձանագրել տրանսգենդեր անձանց նկատմամբ բռնությունները որպես գենդերային հիմքով ատելության հողի վրա կատարվող բռնություններ,

արձանագրել հնչեցված սպառնալիքները որպես ատելության խոսք,

իրականցնել հաղորդումների արդար, թափանցիկ եւ անկողմնակալ քննություն,

դադարել տրանսգենդեր անձանց նկատմամբ օգտագործել սխալ, վիրավորական եւ խտրական տերմինաբանություն գրությունների մեջ եւ հաղրդակցվելիս:

Կրոնական կառույցներին եւ առաջնորդներին՝

իրականանցել միայն սեր եւ հարգանք ոգեկոչող քարոզ, ներառյալ՝

ընդունել հավատացյալ տրանսգենդեր անձանց իրենց եկեղեցիներում,

իրենց հետեւորդների շրջանում տարածել սեռական եւ գենդերային հավասարության գաղափարախոսությունը,

զերծ մնալ քաղաքական որոշումների վրա ազդեցություն գործադրելուց՝ չմոռանալով որ ՀՀ-ն աշխարհիկ երկիր է, որտեղ եկեղեցին գործում է զատ քաղաքականությունից:

Մեդիա կառույցներին եւ լրագրողներին՝

Ծավալել որակյալ եւ անկողմնակալ մասնագիտական գործունեություն՝ չմոռանալով հանրային կյանքի վրա մեդիայի ազդեցության մասին, ներառյալ՝

զերծ մնալ իրավիճակը սրող, տրանսգենդեր անձանց վիրավորող եւ նսեմացնող մեդիա նյութերի տարածումից,

դադարել տրանսգենդեր անձանց արժանապատվությունը վիրավորող նյութեր հրապարակելը,

տրանսգենդեր անձանց խնդիրները լուսաբանելիս՝ համապատասխան գիտելիքների եւ տեղեկատվության պակաս զգալու դեպքում համագործակցել «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի հետ:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն նաեւ հիշեցնում է, որ տրանսգենդեր անձիք միշտ եւ բոլոր ժամանակներում գոյություն են ունեցել մեր հասարակության մեջ, իսկ ներկայիս ժամանակաշրջանի ոգուն համապատասխան եւս մեկ անգամ կոչ է անում բոլոր համաքաղաքացիներին ցուցաբերել սոլիդարություն եւ հարգանք սեռական եւ գենդերային փոքրամասնությունների նկատմամբ՝ նպաստելով Հայսատնում ժողովրդավարության ամրապնդմանը եւ իրավահավասարության հաստատմանը:

ՄԱՐՏ-ԱՊՐԻԼ-ՄԱՅԻՍ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԹԻՎ

ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍ ԹԵՅԻ ՇՈՒՐՋ **3**

ԿԻՆՈԴԻՏՄԱՆ ԱԿՈՒՄԲ **3**

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ **15**

ՄԱՐՏ-ԱՊՐԻԼ-ՄԱՅԻՍ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԹԻՎ

58

2019 Թ.

ՄԱՐՏ - ԱՊՐԻԼ-ՄԱՅԻՍ

«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԿ

ԲՈԼՈՐ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԵՆ

+374 11 880 770

www.rightsidengo.com

rightsidengo@gmail.com

@RightSideNGO

RightSideNGO

RightSideNGO

RightSideNGO

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ